


Հավելված № 1
 Հաստատված է
 «Այդի Բանկ» ՓԲԸ Վարչության Նախագահի
 2022 թվականի -ի N -Լ կարգադրությամբ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանումներ	Իրավաբանական վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	
Տարածումը	Բանկի բոլոր ստորաբաժանումներ
Այլ դրույթներ	
Առնչվող փաստաթղթեր	«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը

	0900_FO_KRG_300522_Privacy_01_01			ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
Գաղտնիության կանոններ	Կիրառման ամսաթիվը 31/05/2022	Խմբագրություն 1	Էջ 2 / 5	

ԳԼՈՒԽ 2. ԱԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ 3

ԳԼՈՒԽ 5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ 3


ԳԼՈՒԽ 6. ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ 4

ԳԼՈՒԽ 8. ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՄՔՆԵՐԸ 4

ԳԼՈՒԽ 9. ՍՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5



	0900_FO_KRG_300522_Privacy_01_01			ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
Գաղտնիության կանոններ	Կիրառման ամսաթիվը 31/05/2022	Խմբագրություն 1	Էջ 3 / 5	

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն գաղտնիության քաղաքականությամբ սահմանվում է «Այրի Բանկ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Բանկ) պաշտոնական կայքի՝ www.idbank.am (այսուհետ՝ Կայք) այցելուների և Բանկի հաճախորդների (այսուհետ՝ Օգտագործող) անձնական տվյալների մշակման, հավաքագրման, օգտագործման և դրանց պաշտպանության վերաբերյալ կարգավորումները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն քաղաքականության բոլոր հասկացությունները անհրաժեշտ է մեկնաբանել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով առկա սահմանումների շրջանակներում:
3. Օրենքի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում որևէ ֆիզիկական անձի վերաբերող ցանկացած տեղեկատվություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն բացահայտել տվյալ անձի ինքնությունը:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Բանկը գործում է օրինականության, համաչափության, հավաստիության և սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքների հիման վրա:
5. Բանկը բարձր է գնահատում Բանկի կայքի Օգտագործողների անձնական տվյալների գաղտնիության պահպանումը և պաշտպանությունը:


ԳԼՈՒԽ 4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

6. Բանկը կարող է հավաքագրել Օգտագործողի կողմից Բանկի ծառայություններից օգտվելու ուղղված կամ Բանկի հետ կապ հաստատելու նպատակով Բանկի կայքով կատարվող գործողությունների միջոցով անձամբ Բանկին տրամադրվող տեղեկություններ/տվյալներ:

ԳԼՈՒԽ 5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

7. Բանկն օգտագործում է սույն քաղաքականության 6-րդ կետով հավաքագրված տվյալները հետևյալ նպատակներով.
- 1) սպասարկման որակի բարձրացման և ապահովման նպատակով,
 - 2) օգտագործողի հետ կապ հաստատելու խնդրանքին արձագանքելու նպատակով,
 - 3) օգտագործողի հարցումներին պատասխանելու նպատակով,
 - 4) օգտագործողին հետաքրքրող կամ Բանկի կարծիքով հնարավոր հետաքրքրող պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու;
 - 5) բանկի և Օգտագործողի միջև պայմանագրով ամրագրված ցանկացած պարտավորության իրագործման նպատակով;
 - 6) կայքում առկա տեղեկության վերաբերյալ փոփոխությունների մասին ծանուցելու նպատակով;
 - 7) կայքի կիրառելիության և գովազդային արշավների վերաբերյալ տվյալների վերլուծության նպատակով;
 - 8) հնարավոր խնդիրների և չարաշահումների բացահայտման և դրանց համապատասխան հնարավոր լուծումների տրամադրման նպատակով:



	0900_FO_KRG_300522_Privacy_01_01			ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
Գաղտնիության կանոններ	Կիրառման ամսաթիվը 31/05/2022	Խմբագրություն 1	էջ 4 / 5	

8. Օգտագործողի կողմից տրամադրված տեղեկատվությունը հավաքագրվում և թարմացվում է ավտոմատ կերպով յուրաքանչյուր անգամ նոր տեղեկություն ստանալիս:

9. Բանկը նաև օգտագործում է հավաքագրված տեղեկատվությունը օրենքով և ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված իր պարտավորությունների կատարման նպատակով, ինչպես նաև հնարավոր հանցագործությունների (ներառյալ ահաբեկչության, փողերի լվացում և այլ ֆինանսական հանցագործություններ) հայտնաբերման նպատակով:

ԳԼՈՒԽ 6. ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

10. Օգտագործողի անձնական տվյալները գտնվում են պաշտպանված ցանցերում և հասանելի են միայն սահմանափակ թվով անձանց, ովքեր կարող են լինել ինչպես Բանկի աշխատակիցները, այնպես էլ Բանկի հետ համագործակցողները, ովքեր նշված համակարգերի հասանելիության հատուկ իրավունքներ ունեն և պարտավոր են պահպանել նշված տեղեկությունների գաղտնիությունը: Բացի այդ ցանկացած տվյալ, որը Օգտագործողը մուտքագրում է կայքում պաշտպանված է Secure Socket Layer (SSL) տեխնոլոգիայի միջոցով: Բանկը իրականացնում է մի շարք անվտանգության գործառնայթնեղ ապահովելու Օգտագործողի անվտանգ այցելություն Կայք:

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ

11. Բանկը Օգտագործողի անձնական տվյալները որևէ ձևով չի փոխանցում երրորդ անձանց: Օգտագործողի անձնական տվյալները կարող են փոխանցվել միայն Օգտագործողի համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

12. Բանկը թույլ չի տալիս որևէ երրորդ կողմի իրականացնել Կայքի տիրույթում Օգտագործողների պահվածքի ուսումնասիրություն:

13. Կայքի շահագործման, սպասարկման և այլ նպատակների հետ կապված Բանկի և այլ անձանց միջև կարող է կնքվել պայմանագրեր՝ միայն տվյալ անձանց կողմից իրենց հասանելի տվյալների գաղտնիության պահպանման պայմանով:


14. Օգտագործողների վերաբերյալ բանկային գաղտնիք և անձնական տվյալ չհամարվող տեղեկությունները կարող են տրամադրվել այլ անձանց մարքեթինգի, գովազդի կամ այլ նպատակներով:

ԳԼՈՒԽ 8. ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

15. Օգտագործողն ունի Օրենքով սահմանված մի շարք իրավունքներ, որոնք կարող է իրացնել Բանկին դիմելու միջոցով, օրինակ.

- 1) Օգտագործողն իրավունք ունի ստանալու տեղեկություններ իր անձնական տվյալների, տվյալները մշակելու, մշակելու հիմքերի և նպատակների, տվյալները մշակողի, նրա գտնվելու վայրի մասին, ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները,
- 2) Օգտագործողն իրավունք ունի ծանոթանալու իր անձնական տվյալներին, մշակողից պահանջելու ուղղել, ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար:



	0900_FO_KRG_300522_Privacy_01_01			ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
Գաղտնիության կանոններ	Կիրառման ամսաթիվը 31/05/2022	Խմբագրություն 1	էջ 5 / 5	

ԳԼՈՒԽ 9. ՍՈՒՅՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Բանկը գործադրում է լավագույն ջանքերը Կայքը առավել անվտանգ դարձնելու համար: Տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց Բանկը պարբերաբար կատարելագործում է Կայքի անվտանգային միջոցները, ուստի նաև իրավասու է ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխել ինչպես Կայքի օգտագործման տեխնիկական պայմանները, այնպես էլ սույն քաղաքականության դրույթները, ինչի վերաբերյալ Բանկը կծանուցի Օգտագործողներին՝ տեղադրելով այն Կայքի համապատասխան բաժնում և էլեկտրոնային եղանակով ծանուցման եղանակ ընտրած Հաճախորդներին՝ ուղարկելով էլեկտրոնային փոստին:

